

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀԵՐԸ ՉԻ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ

Հակոբ Սանասարյան 2008

2008 թվականի մայիսի 29-ին Թեղուտի խնդրով հանդիպեցինք ՀՀ վարչապետի հետ: Հանդիպման նախաձեռնողը, հենց ինքը՝ վարչապետն էր: Մոտ մեկ ժամ տևած քննարկումը հուսադրող էր: Վարչապետը ուշադրությամբ լսում էր հրավիրվածներին՝ նշումներ կատարում, հարցերով ճշտում-հստակեցնում ներկայացվող խնդիրը: Ավարտին վարչապետը խոստացավ մի քանի օր հետո քննարկումը շարունակել, իսկ այդօրվա քննարկման ընթացքում ձևավորված հարցերը ներկայացնել համապատասխան գերատեսչություններ՝ մասնագիտական կարծիք ունենալու համար: Մենք վարչապետին ասացինք, որ մեր բողոքը ուղղված է ՀՀ բնապահպանության նախարարության դեմ և առայսօր այդ նախարարությունը Թեղուտին վերաբերող հարցերին միշտ տվել է շրջանցող, մոլորեցնող, կողմնալալ պատասխաններ և անընդունելի է, որ միայն այդ նախարարությունը պատասխանի մեր հարցադրումներին:

Վերջերս ստացանք ՀՀ վարչապետին ներկայացրած մեր հարցերի պատասխանները (հետայսու՝ Պատասխան): Պատասխան փաստաթղթի կազմող-կատարողն է ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արամ Գաբրիելյանը: Այդ փաստաթուղթն իր ստորագրությամբ շրջանառության մեջ է դրել ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Սիմոն Պապյանը:

Ստորև ներկայացնում ենք մեր նկատառումները ՀՀ վարչապետին ներկայացրած հարցադրումներին ՀՀ բնապահպանության նախարարության տրված պատասխանների վերաբերյալ.

Հարցադրում 1.1

Նախագծում հանքաքարի, մակաբացման ապարների, արտադրական ու կենցաղային թափոնների, ծախսվելիք ջրի, վառելիքի, կորզվելիք մետաղների ծավալները հաշվարկված են 25 տարվա համար, մինչդեռ հողերին, ջրային համակարգերին, բուսական ու կենդանական աշխարհին հասցվելիք վնասները ներկայացված են միայն հանքարդյունահանման առաջին փուլի՝ 8 տարվա համար.

Պատասխան

Քանի որ հանքավայրի շահագործումը նախատեսված է իրականացնել մի քանի փուլերով, իսկ հողերի խախտմանը, բուսականությանը, կենդանական աշխարհին, ջրային ռեսուրսներին համայնքային հողերին հասցվելիք վնասները ընդամենը կանխատեսվող մեծություններ են, ապա հնարավոր մեծ սխալներից խուսափելու համար՝ Թեղուտի հանքավայրի շահագործման նախագիծը ներկայացվել է միայն առաջին փուլի համար, այսինքն՝ 8 տարվա կտրվածքով: Փորձաքննության ենթարկվել է միայն հանքավայրի շահագործման 1-ին փուլի նախագիծը: Հանքավայրի շահագործման 2-րդ փուլի համար կկատարվի նոր նախագիծ և կներկայացվի փորձաքննության:

Ինչպես երևում է Պատասխանից, ՀՀ բնապահպանության նախարարությունը հարցին գիտականորեն հիմնավորված պատասխան տալու փոխարեն, փորձում է կոծկել ACP (Արմենիան Քափրը Փրոգրամ) ընկերության կողմից թույլ տրված կոպիտ խախտումը և, չվախենալով պատասխանատվությունից, հարցին տալիս է անհեթեթու ծիծաղելի պատասխան:

ՀՀ բնապահպանության նախարարությունը գրած՝ ‘փորձաքննության ենթարկվել է միայն հանքավայրի շահագործման 1-ին փուլի նախագիծը, պետք է ձևակերպված լինե՞ր հետևյալ կերպ՝ փորձաքննության ենթարկվել է միայն հանքավայրի շահագործման 1-ին փուլի ՇՄԱԳ-ը և նախագիծը’:

Զարմանալի է, որ ՀՀ բնապահպանության նախարարությունն այս հարցում ոչ միայն արհամարհում է անկախ փորձագետների և հասարակական կազմակերպությունների տեսակետներն, այլև անտեսել է նաև ՀՀ վարչապետի՝ այսինքն այն կառույցի գլխավորի, որի կազմում և ինքն է ընդգրկված, կարծիքը: Այսպես, ՀՀ վարչապետի հետ երկրորդ հանդիպման ժամանակ (29.05.2008թ.), երբ ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Սիմոն Պապյանը ընթերցեց սույն հարցադրման պատասխանը, վարչապետը վրդովմունքով ասաց, որ ծրագիրը պետք է ամբողջությամբ ներկայացվի և այս հարցում ճիշտ է հասարակական կազմակերպությունների տեսակետը, իսկ բնապահպանության նախարարության տեսակետը՝ սխալ: Հետևաբար, պետք է կազմվի ամբողջ ծրագրի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և ներկայացվի փորձաքննության: Հայտնի է, որ ծրագրի միասնական-ամբողջական վերլուծությունից հետո է միայն հնարավոր գնահատել ծրագրի իրականացման կամ կասեցման նպատակահարմարությունը:

Հարցադրում 1.2

Հասցվելիք վնասի գնահատումը կատարվել է խիստ նվազեցված հաշվարկներով: Օրինակ՝ բացահանքի անտառային տարածքի ավերման հետևանքով վնասը յուրաքանչյուր հեկտարի հաշվով գնահատվել է՝ ընդամենը 28 000 դրամ (1 քառ.մ-ը՝ 2.8 դրամ), այն դեպքում, երբ Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին՝ օրենքով այդ նույն անտառային հողերում արդյունաբերական թափոններ տեղադրելու համար տուգանքը մեկ հեկտարի համար սահմանված է 100 մլն դրամ, իսկ ապօրինի խոտհունձի համար՝ 300 հազար դրամ: Նախագծում՝ կառուցվելիք արհեստական լճակի համար հատկացված տարածքի 1 հեկտարը գնահատվել է 8 հազար դրամ (1 քառ.մ-ը՝ 0.8 դրամ)

Պատասխան

Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին՝ ՀՀ օրենքով սահմանված վնասի հատուցման սակագների կիրառումը բնությանը պատճառված վնասի գնահատման համար ճիշտ չէ, քանի որ դրանք, ինչպես բխում է նշված օրենքի վերնագրից և համապատասխան հողվածներից, նախատեսված են բնապահպանական օրենսդրության իրավախախտումների համար /կիրառված են որպես պատժամիջոց, այսինքն, ավելի բարձր են գնահատված, քան պատճառված իրական վնասը/, իսկ Թեղուտի հանքավայրի շահագործման օրինակում՝ ACP՝ փակ բաժնետիրական ընկերությունը հանդես է գալիս որպես օրինական բնօգտագործող և

այդ նկատառումներով ապօրինի բնօգտագործման համար, գործնականում որպես պատժամիջոցի չափ հաշվարկելու համար կիրառվող սակագները, իրավական տեսանկյունից սխալ է օգտագործել բնությանը պատճառված վնասի հաշվարկման համար:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ վնասի հատուցման չափը կարող է որոշվել միայն ելնելով պատճառված իրական (փաստացի) վնասի և չստացված եկամուտի գնահատման արդյունքում որոշված արժեքից (գումարից), այլ ոչ թե հատուցման կոնկրետ սակագներից, ինչպես սահմանված է Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին՝ ՀՀ գործող օրենքով:

Տեղեկանքում բերված հիմնավորումները սխալ են և չեն բխում նախագծում ներկայացված հաշվարկներից: Օրինակ, բացահանքի տարածքում անտառի հատումից հասցված վնասը (աշխատանքային նախագիծ, հատոր 7, էջ 76, աղյուսակ 6.4.4) կազմել է 828 մլն. 248 հազ. դրամ: 1 հա-ի հաշվով վնասը կազմում է 12 մլն. 742 հազ. դրամ, 1 քմ-ի հաշվով վնասը կազմում է 1274.2 դրամ: Այսինքն տեղեկանքում բերված թիվը 455.1 անգամ նվազեցված է: Նախագիծը հանքավայրի տարածքում չի ենթադրում ապօրինի հատումներ, խոտհունձ, թափոնների տեղադրում կամ որևէ այլ ապօրինի գործունեություն: Լճակի համար հատկացված 5 հա տարածքի ծառերի հատումից հասցված վնասը (աշխատանքային նախագիծ, հատոր 7, էջ 75, աղյուսակ 6.4.3) կազմում է 201 մլն. 333 հազ. դրամ, 1 հա-ի համար՝ 40 մլն 266 հազ. դրամ, իսկ 1 քմ-ի համար՝ 4026.7 դրամ:

Շրջակա միջավայրին հասցվող գումարային վնասը՝ ըստ նախագծի հաշվարկների, կազմում է մոտ 2.1 մլրդ դրամ, իսկ շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ուղղված միջոցառումների գումարը՝ մոտավորապես 8 մլրդ դրամ:

ա. Պատասխանից հասկացվում է, որ Բնապահպանության նախարարության աշխատակիցները՝ փաստաթուղթը կազմող Արամ Գաբրիելյանը և այդ փաստաթուղթը ստորագրող Սիմոն Պապյանը ուշադրությամբ չեն կարդացել ACP Արմենիան Քափըր Փրոգրամ ընկերության կազմած Թեղուտի պղնձամուլիբդենային կոմբինատի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում-ը (ՇՄԱԳ) և Աշխատանքային նախագիծ-ը: Եթե նրանք լրջորեն կարդային այդ փաստաթղթերը, ապա կտեսնեին, որ օրինակ, անտառային հանդակների օտարացումից հասցված վնասը հաշվարկված է հենց նույն՝ Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին՝ ՀՀ օրենքով (տես՝ ՇՄԱԳ, էջ 140-143, Աշխատանքային նախագիծ, հատոր 7, էջ 73-75): Այսինքն՝ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակիցներն տվյալ խնդրում նաև անտեղյակի տպավորություն են թողնում: Նրանք պետք է իմանան, որ նշված օրենքի սակագները վերաբերում են միայն բնությանը հասցրած վնասի հատուցմանը, երբ հայտնի է, որ իրավախախտում կատարողից, տվյալ դեպքում, նաև առգրավվում է փայտանյութ- հասցված նյութական վնասի արժեքը, դրա հետ մեկտեղ՝ ենթարկվում է պատասխանատվության (վարչական, քրեական): Հետևաբար, Պատասխանում բերված՝ ավելի բարձր են գնահատված, քան պատճառված իրական վնասն է, արտահայտությունը անհիմն է և իրականությունից հեռու:

Կարելի է համաձայնել ՀՀ բնապահպանության նախարարության միայն այն տեսակետի հետ, որ ապօրինի բնօգտագործման համար, գործնականում որպես

պատժամիջոցի չափ հաշվարկելու համար կիրառվող սակագները, իրավական տեսանկյունից սխալ է օգտագործել բնությանը պատճառված վնասի հաշվարկման համար: Սակայն մի վերապահումով. մեր կարծիքով, օրինական բնօգտագործման այն դեպքերում, երբ բնությանը հասցվում է անդառնալի կորուստներ, ինչպես օրինակ՝ բացահանքի կամ մակաբացման ապարների և պոչամբարի համար նախատեսված տարածքների կամ այդ նույն նպատակով՝ անտառահատումների պարագայում նշված գործողություններն իրականացնելիս հասցվելիք վնասի չափերը կարող են բազմակի գերազանցել ապօրինի բնօգտագործման դեպքում սահմանված սակագներին:

բ. Բացահանքի համար նախատեսված անտառային հողերի մեկ հեկտարին հասցվելիք վնասի չափը՝ 28 հազար դրամը (մեկ քառակուսի մետրը՝ 2,8 դրամ) կամ արհեստական լճակի դեպքում՝ մեկ հեկտարինը 8 հազար դրամը (մեկ քառակուսի մետրը՝ 0,8 դրամ) մենք վերցրել ենք Աշխատանքային նախագծի Հողերի խախտումից հասցված վնասի հաշվարկ՝ 6.4.2 աղյուսակից (հատոր 7, էջ 72): Եվ թվում էր, որ ՀՀ կառավարությունը պետք է անընդունելի համարի անտառային հողերին հասցվելիք վնասի այդպիսի չնչին գնահատումը: Սակայն, ՀՀ բնապահպանության նախարարությունը, մեզ համար բացարձակորեն անսպասելի, գրում է, որ Տեղեկանքում բերված հիմնավորումները սխալ են և չեն բխում նախագծում ներկայացված հաշվարկներից: Օրինակ, բացահանքի տարածքում անտառի հատումից հասցված վնասը (աշխատանքային նախագիծ, հատոր 7, էջ 76, աղյուսակ 6.4.4) կազմել է 828 մլն. 248 հազ. դրամ: 1 հա-ի հաշվով վնասը կազմում է 12 մլն. 742 հազ. դրամ, 1 քմ-ի հաշվով վնասը կազմում է 1274.2 դրամ: Այսինքն տեղեկանքում բերված թիվը 455.1 անգամ նվազեցված է:

Այսպիսի պատասխանը շատերի մեջ թերևս կարծիք ստեղծի, որ ՀՀ բնապահպանության նախարարությունը հիմնովին ջախջախել է հարցադրումը, սակայն խնդրին որոշ չափով տեղյակները հեշտությամբ կհամոզվեն, որ այդպիսի պատասխանով Նախարարությունը ջախջախել է հենց ինքն իրեն, միաժամանակ վարկաբեկվել, այն առումով, որ չհիմնավորված ծրագիրը իրականացնելու՝ Արմենիան Քափրը Փրոգրամ ընկերության շահերը պաշտպանելու համար, դիմել է բացահայտ կեղծիքի.

Այսպես, ՀՀ բնապահպանության նախարարությունը ծառահատումներից հասցվելիք վնասը վերագրում է հողերի խախտումից սպասվելիք վնասին և հարյուրավոր անգամ սխալ է գտնում: Նաև՝ 6.4.4 աղյուսակը ոչ թե բացահանքի տարածքում անտառի հատումից հասցված վնասին է վերաբերում, ինչպես բնապահպանության նախարարությունն է ներկայացնում, այլ դա՝ պոչամբարի տակ հատկացված տարածքի ծառահատումների հաշվեգնահատման ամփոփագիր աղյուսակն է (Այդ աղյուսակում վնասի չափը ոչ թե 828 մլն. 248 հազ. դրամ է, այլ ընդամենը 376 մլն 240 հազար դրամ): Ինչպես նաև՝ առաջին հերթի բացահանքի տակ հատկացված տարածքի ծառահատումների հաշվեգնահատման ամփոփագիրը ներկայացված է Աշխատանքային նախագծի 6.4.5 աղյուսակում, որի տողերի գումարումից ստացվում է ոչ թե 828 մլն. 248 հազ. դրամ, այլ՝ 816 մլն 544 հազար դրամ: ՀՀ բնապահպանության նախարարությունը նույնը կատարել է նաև արհեստական լճակի համար հատկացված տարածքի առումով: Մեր այն հարցադրմանը, որ այդտեղ 1 մ2 անտառային հողին հասցվելիք վնասը գնահատվել է

ընդամենը 0,8 դրամ, ՀՀ բնապահպանության նախարարությունը, իրեն բնորոշ մոլորեցնող վարժանքներով, այդ տարածքում նախատեսվող ծառահատումներից առաջացող գումարը (տես՝ Արհեստական լճակի տակ հատկացված տարածքի ծառահատումների հաշվեգնահատման ամփոփագիր, աղյուսակ 6.4.3) վերագրել է հողերի խախտումին և ստացել՝ 1 քառակուսի մետր հողի հաշվով՝ 4026.7 դրամ:

ՀՀ բնապահպանության նախարարությունը, զարմանալի հետևողականությամբ, չի ցանկանում տեսնել Աշխատանքային նախագծի Հողերի խախտումից հասցված վնասի հաշվարկ՝ աղյուսակը (6.4.2), փոխարենը մոլորեցնող հորինվածքներ է ստեղծում (աճապարարություն՝ պետական-գերատեսչական մակարդակով):

Ինչպես տեսնում ենք, ՀՀ բնապահպանության նախարարության այն տեսակետը, թե՛ Տեղեկանքում բերված հիմնավորումները սխալ են և չեն բխում նախագծում ներկայացված հաշվարկներից, իրականությունից հեռու է: Այստեղ սխալ են՝ ճիշտ և ճիշտ վերաբերում է ՀՀ բնապահպանության նախարարության անունից Պատասխան կազմողներին ու շրջանառության մեջ դնողներին:

Մենք պնդում ենք, որ ՀՀ բնապահպանության նախարար պարոն Արամ Հարությունյանը, ճիշտ է՝ ինքը չի ստորագրել Պատասխան փաստաթուղթը, բայց որպես բնապահպանական գերատեսչության ղեկավար, նախ, պետք է ներողություն խնդրի հասարակությունից նշված՝ սխալ են-ի համար, քանզի դրանով նաև ոսնահարվել է Հարցադրումներ կազմողների արժանապատվությունը:

Միայն քննարկվող այս մի հարցի առումով, հստակորեն կարելի է ասել, որ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակիցները, որոնք պետական գանձարանից աշխատավարձ են ստանում, որպեսզի իրավական-գիտական հիմքեր ունեցող փաստաթղթեր կազմեն և պաշտպանեն պետական շահերը, իրականում փաստերը նենգափոխելով ու կեղծելով լծված են Արմենիան Քափըր Փրոգրամ ընկերության շահերի պաշտպանության գործին:

Նաև՝ ՀՀ բնապահպանության նախարարին ցանկանում ենք հիշեցնել, որ ՀՀ վարչապետին ներկայացրած մեր հարցադրումներում որևէ խոսք չկա այն մասին, որ իբր Նախագիծը հանքավայրի տարածքում ենթադրում է ապօրինի հատումներ, խոտհունձ կամ որևէ այլ ապօրինի գործունեություն: Ուրիշ հարց է, որ Նախագիծը ապօրինություն ու կեղծիք է պարունակում, որի մասին բազում հրապարակումներ են եղել:

Նշենք նաև, որ Տեղեկանքում բերված՝ Շրջակա միջավայրին հասցվող գումարային վնասը՝ ըստ նախագծի հաշվարկների, կազմում է մոտ 2.1 մլրդ դրամ հավաստումը պետք է վերանայվի, քանզի նշված թիվը միայն տարեկան հասցվելիք վնասն է:

Հարցադրում 1.3

Թերի է կատարված ձկնաշխարհին հասցվող վնասի գնահատումը: Ըստ նախագծի, Շնող գետում և դրա վտակներում տարեկան արդյունագործական որսի համար առկա ձկնապաշարը կազմում է 130 կգ, որի ոչնչացման համար հատուցվելիք վնասը ներկայացված է ընդամենը 175000 դրամ: Այս հաշվարկը կատարվել է ձկնատեսակների շուկայական գների հիման վրա (կիլոգրամով), ինչը հակասում է Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պահանջին՝ ըստ որի կենդանատեսակների ոչնչացման

դեպքում վնասները հաշվարկվում են կենդանու յուրաքանչյուր միավորի համար՝ անկախ դրանց տարիքից:

Պատասխան

Շնող գետում չի իրականացվում արդյունագործական ձկնորսություն: Ձկան պաշարների քանակությունը հաշվարկված է հաշվի առնելով 1 տարի շարունակ կատարված հիդրո-կենսաբանական և ձկնակերային (բենթոս) բազայի ուսումնասիրությունները (աշխատանքային նախագիծ, հատոր 7, էջ 20, աղյ. 2.1.17): Ձկնապաշարները հստակ հաշվելու համար տարածված մեթոդներից է՝ տոկահարումը և այդ հատվածում ձկների քանակական հաշվարկ: Հաշվի առնելով, որ Շնող գետը փոքր է, ապա նման մեթոդիկայի կիրառումը կարող էր կործանարար ազդեցություն ունենալ այնտեղ գտնվող ողջ ձկնապաշարի համար: Նման եղանակի կիրառումը նաև իրավական տեսանկյունից հիմնավոր չէր կարող լինել, քանի որ կենդանու յուրաքանչյուր միավորի համար վնասների հաշվարկ պահանջող՝ հարցադրման մեջ հիշատակված իրավական ակտը վերաբերում է բնապահպանական իրավախախտումներին: Այս նկատառումներից ելնելով, հաշվարկը կատարվել է կերային բազայի հիման վրա. Շնող գետի կերային բազան կարող է այնտեղ ապահովել 130 կգ ձկնապաշարի քանակություն:

Սույն Պատասխանը կազմողն ու շրջանառության մեջ դնողը, հավանաբար տեղյակ չեն, որ իրենց իսկ գերատեսչության կողմից տրված՝ Թեղուտի լեռնահարստացման կոմբինատի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) նախագծային փաստաթղթերի վերաբերյալ՝ Եզրակացությունում (ԲՓ 31, 03.04.2006թ.) գրված է. ՇՄԱԳ-ի շրջանակներում իրականացվել է նաև Շնող գետի և նրա երեք՝ Դուքանաձոր, Խառատաձոր և Կռունկ վտակների վերին, միջին, ներքին հոսանքների համար ջրակենսաբանական ուսումնասիրություններ: Իրականացված հետազոտության արդյունքները վկայում են, որ հետազոտված գետակները ունեն հետևյալ էկոլոգիական և տնտեսական արժեքները՝ ... տեղական նշանակության ձկնային արդյունագործական պաշարներ: Ինչը վերցված է ՇՄԱԳ-ից, տես՝ էջ 84: Նույնը արտացոլված է Աշխատանքային նախագծում. Ձկնատնտեսական հանդակների օտարացումից հասցված վնասը՝ բաժնից. Ներկա պարագայում Թեղուտի կոմբինատի շինարարության հետևանքով հասցվելիք նյութական վնասի հաշվարկը եզրափակվում է միայն ձկան արդյունագործական պաշարների տնտեսական արժեքով և միայն Շնող գետով և նրա վտակներով... Ձկան կենսազանգվածի 60%-ը կազմում է կապույտը, 20%-ը՝ Քոի բեղլուն, 10%-ը՝ կարմրախայտը, 10%-ը Քոի լերկաձուկը և հայկական տառեխը: Յուրաքանչյուր մեկ կիլոգրամ կողակը արժի 500 դրամ, կապույտը 1000, կարմրախայտը 8000 դրամ, այլ տեսակի ձկները՝ 500 դրամ: Հաշվարկները ցույց են տալիս, որ հատակային կենդանիների միջին կենսազանգվածը հավասար է մոտ 7,5 գ/քմ, ինչը հնարավորություն է տալիս ստանալ Շնող գետի և նրա վտակների տարածքում մոտ 130 կգ ձուկ, 175000 դրամ ընդհանուր արժողությամբ (հատոր 7, էջ 75-76):

Տեղեկանքում՝ ձկնաշխարհին հասցվելիք վնասի գնահատման մեր մոտեցումը հիմնավորվում է նրանով, որ ՇՄԱԳ-ում և Աշխատանքային նախագծում, օրինակ, ծառահատումներից հասցվելիք վնասը հաշվարկված է Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին՝ ՀՀ օրենքի պահանջներին

համապատասխան: Անհրաժեշտ է նշել, որ այս օրենքի սակագները վերաբերում են միայն բնությանը հասցված վնասին, և չեն պարունակում հասցված նյութական-ապրանքային վնասի հատուցումը:

Պատասխանում բացակայում է գլխավորը՝ թե ի՞նչ հիմնավորմամբ՝ հանքարդյունաբերության հետևանքով կենդանական աշխարհին հասցվելիք վնասը կազմում է ընդամենը 175 հազար դրամ:

Հարցադրում 1.4

Թեղուտի հանքավայրի խախտվելիք և հարակից տարածքներում առկա մնացած կենդանիներին հասցվելիք վնասը լիովին անտեսված է և, փաստորեն, վերը նշված 175000 դրամը համարվում է ողջ կենդանական աշխարհին հասցվելիք վնասը:

Պատասխան

Տեղեկանքի սույն ենթակետում բերված գնահատականը ենթադրական բնույթ ունի, այն նկատառումներով, որ նշված չէ կամ բացակայում է իրական վնասի գնահատականը՝ գոնե բնեղեն կամ քանակական տեսքով:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ բնապահպանության նախարարությունը այս հարցին նույնպես պատասխան չի տալիս և նույնիսկ զարմացած է, որ հարցադրման հեղինակները չեն ներկայացրել իրական վնասի գնահատականը, այն էլ՝ գոնե բնեղեն կամ քանակական տեսքով:

Այսպիսի խոտան Պատասխանը նաև արդյունք է այն բանի, որ նախարարությունը դրամաշնորհային բազում ծրագրեր է իրականացնում, հետևաբար, պետական խնդիրներին վերաբերող հարցերին քիչ ժամանակ է տրամադրում, որի հետևանքով նաև նախարարության աշխատակիցները աստիճանաբար կորցնում են իրենց մասնագիտական կարողությունները:

Հարցադրում 2

Ըստ նախագծի, հանքարդյունաբերական թափոնները (մակաբացման ապարներ և պոչանք)՝ լցվելու են Շնող գետի՝ Կռունկ, Դուքանաձոր և Խառատաձոր վտակների հունները-կիրճերը: Դա կհանգեցնի այդ գետակների և դրանց էկոհամակարգերի ոչնչացմանը, ինչպես նաև տարածաշրջանի օդի, հողերի ու ջրերի աղտոտմանը ծանր մետաղներով, ինչը ժամանակին զուգահեռ կաճի՝ գլխավորապես պոչամբարի առկայության պատճառով: Հանքի շահագործման արդյունքում կխաթարվեն ջրագոյացման համակարգերը, կնվազի ջրի քանակը, ինչպես նաև կվատթարանա դրա որակը: Հնարավոր է ծանր մետաղների ներթափանցում ստորերկրյա ջրերի մեջ: Հայտնի է, որ ծանր մետաղների բարձր խտությունները հանգեցնում են սաղմնաթունավոր, մուտագեն, իմունային համակարգը վնասող, ժառանգական խաթարումների և այլաբնույթ հիվանդությունների:

Պատասխան

Շնող գետի Կռունկ վտակի կիրճում որևէ թափոնների տեղադրում և արդյունաբերական գործունեության ծավալում չի նախատեսվում: Մակաբացման ապարները լցվում են Դուքանաձոր գետի կիրճը, այդ հատվածում՝ 2 կմ

երկարությամբ, գետը մտցվում է երկաթբետոնե ամրության մեջ, այս դեպքում գետի նախկին հուն վերադառնալը բացառվում է:

Խառատածորում տեղադրված պոչամբարի տակից գետի հոսքը բացառելու համար կառուցվում է ջրհեռ ջրանցք, որով գետը տեղափոխվում է դեպի ձախ, կառուցվում է երկաթբետոնե հզոր պատվար, որի ամրության և հզորության հիմնավորումները բացառում են ջրի վերադարձի որևէ հնարավորություն:

Այն, որ պոչամբարներ կառուցելու ժամանակ հունները ծածկվում են բետոնե շերտով (որը ծառայում է որպես թունել) և վրան լցվում են թափոնակույտեր, պոչամբարների կառուցման ժամանակ կիրառվող մեթոդներից մեկն է, որը Հայաստանի տարածքում կիրառվել է Հին Գեղանուշ պոչամբարի համար: Այս եղանակը երկարաժամկետ շահագործումից հետո դառնում է վտանգավոր և կարող է պատճառ դառնալ վթարների, այդ իսկ պատճառով նոր պոչամբարների կառուցման դեպքում դրանից հրաժարվում են: Գետի փոխված հունը իրենից ներկայացնում է երկաթբետոնե ջրանցք, ինչը բացառում է գետի վերադարձը հին հունին: Բացի այդ, գետի հունի փոխման եղանակը ընտրվել է բաց ջրանցքի տարբերակով, որպեսզի ժամանակի ընթացքում այնտեղ վերականգնվի բենթոսը, և գետը պահպանի իր ասիմիլյացիոն հատկությունները: Անհրաժեշտ է շեշտել, որ պոչամբարի նախագծային լուծումները բացառում են ստորերկրյա ջրեր որևէ վնասակար նյութի (այդ թվում՝ ծանր մետաղների) ներթափանցումը, ուստի և տեղին չեն այդպիսի ազդեցությամբ պայմանավորված մտահոգությունները:

ա. Հնարավոր է, որ Կռունկ վտակի կիրճում թափոնների տեղադրում չի նախատեսվում (ըստ Նախագծի այդտեղ արհեստական լճակ է կառուցվելու): Նախագծում գրված է, որ լինելու է երեք թափոնակույտ. Ժայռային ապարները նախնական նախատեսվում է տեղավորել Դուքանաձոր գետի կիրճում, բացահանքից դեպի հյուսիս-արևմուտք: Օբսիդացած հանքաքարը 0,2% պղնձի պարունակությամբ, որը ապագայում կարող է ենթարկվել մշակման, կուտակվելու է բացահանքի ուրվագծից 800մ հեռավորության վրա: Այդ հանքաքարի ընդհանուր քանակը բացահանքի 1-ին հերթի վերջնական ուրվագծում կկազմի 2,4 մլն խմ: Մակաբացման փխրուն ապարները տեղաբաշխվելու են հյուսիս-արևմտյան, ինչպես նաև արևմտյան թափոնակույտերում: Թափոնակույտերի ծավալներն են. հյուսիս-արևմտյան՝ 24 մլն խմ, արևմտյան՝ 23 մլն խմ, արևելյան (օբսիդացված հանքաքար)՝ 3 մլն խմ (Աշխատանքային նախագիծ, հատոր 7, էջ 24-25):

Նույն Նախագծի 35 էջում կարդում ենք. Դուքանաձոր գետի ջրերը, որի հունում տեղադրվելու են դատարկ ապարները, նախատեսվում է հեռացնել ջրահեռացման կառույցի օգնությամբ: Ջրահեռացման կազմակերպման համար թափոնների տնտեսությունից վերև նախատեսվում է ջրընդունիչ գլխամաս պաշտպանիչ ցանցով, իսկ թափոնակույտերի սահմանում գետի ձախ լանջով տեղադրվելու է 2 մետր տրամագծով և 1290մ երկարությամբ երկաթբետոնե խողովակ:

Անհասկանալի է մնում Դուքանաձոր գետի՝ իր նախկին հուն վերադառնալու բացառումը: Միայն Նահատակի պոչամբարի օրինակով կարելի է ասել, որ արհեստական ջրատարները երկար չեն ծառայելու. հեղեղումները շարքից հանելու են այդ կառույցները, գլխավորապես՝ հանքավայրի շահագործման ավարտից հետո: Օրինակ, Նահատակ կիրճում, Մեծ Այրում և Ճոճկան գյուղերի հարևանությամբ գտնվող պոչամբարը կառուցելիս, նախ, կիրճի ջրհավաքի ձևավորման սկզբնամասում տեղադրվել է պատվար, բետոնյա ջրատար է կառուցվել, որպեսզի

գոյացող ջրերը տեղափոխվեն պոչամբարից ներքև: Նշված ջրատարը պարբերաբար մաքրվել ու գործել է, երբ հանքահարստացման գործի պատասխանատուն Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատն էր: Մոտ 30 տարի առաջ այն հանձնվեց Ախթալայի հարստացուցիչ ֆաբրիկային, և այդ ժամանակներից առ այսօր նշված ջրատարը չի մաքրվել և չի գործել: Հեղեղումների հետևանքով ջրատարն ամբողջությամբ լցված է հողով և խճով, որտեղ այժմ աճում են ծառեր ու թփեր (մոտ 800 մետր երկարություն և 4 մետր լայնություն ունեցող այդ ջրատարը հեշտությամբ կարելի է մաքրել): Տասնամյակներ շարունակ կիրճի ձևավորման սկզբնամասում գոյացող ջրերը հոսում, լվանում, ակոսում են Նահատակ կիրճում տեղադրված նշված պոչամբարը, իսկ ներքևում այգիներ են, Քարակոփ բնակավայրն է և ապա՝ Դեբեդ գետը: Այժմ, բացի նշված արտահոսքերից, ոչնչով չծածկված այդ պոչամբարից արտանետվող փոշին նույնպես աղետալի վիճակ է ստեղծել, գլխավորապես հարևանությամբ գտնվող բնակավայրերի համար: Նշենք, որ Նահատակ կիրճում կառուցված պոչամբարի նախագծում նախատեսված է պոչանքի լիովին մեկուսացում՝ պոչամբարի ռեկուլտիվացիա, այսինքն՝ հողի շերտով ծածկելը և այդտեղ համապատասխան բուսականություն աճեցնելը...

Նաև՝ եթե Պատասխանում Հին Գեղանուշի պոչամբարի առումով ասվում է, որ գետակի ջրերը պոչամբարի տակով՝ խողովակով հեռացնելը երկարաժամկետ շահագործումից հետո դառնում է վտանգավոր և կարող է պատճառ դառնալ վթարների, ապա ինչո՞ւ է Դուքանաձոր գետակի ջրերը այդ եղանակով հեռացվելու, երբ նշված տարածքը հայտնի է իր հաճախակի և վարար հեղեղումներով: Ամենահավանականն այն է, որ ակտիվ հեղեղումները այդ տարածքում նշված 2 մետր տրամագծով խողովակը կխցանեն և, եթե շահագործան ընթացքում ընկերությունը, գուցե և, վերացնի խցանումները, սակայն հանքավայրի շահագործումից հետո այդ խնդիրը մնում է անորոշ: Այնպես որ, բացարձակորեն համոզիչ չէ Դուքանաձոր գետը իր նախկին հուն վերադառնալու բացառումը:

բ. Խառատաձոր գետի հունում տեղադրվելիք պոչամբարի առումով ՀՀ բնապահպանության նախարարությունը նույնպես բացառում է գետի ջուրը իր նախկին հունը վերադառնալու որևէ հնարավորություն: ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակիցները, հավանաբար պատկերացում չունեն Հայաստանի Հանրապետությունում առկա պոչամբարների աղետալի վիճակի, ինչպես նաև ոլորտի գիտական գրականության մասին: Նրանք պետք է իմանան, որ թե ՇՄԱԳ-ում և թե Աշխատանքային նախագծում բացակայում է պոչամբարի անվտանգության ապահովման երկարաժամկետ որևէ ծրագիր, սակայն բնապահպանության նախարարության գործիչները պոչամբարի անվտանգության ապահովման 100%-անոց երաշխիքներ են տալիս:

ՀՀ բնապահպանության նախարարության այն պնդումը, որ պոչամբարի նախագծային լուծումները բացառում են ստորերկրյա ջրեր որևէ վնասակար նյութի (այդ թվում՝ ծանր մետաղների) ներթափանցումը, ուստի և տեղին չեն այդպիսի ազդեցությամբ պայմանավորված մտահոգությունները՝ չհիմնավորված հայտարարությունն է: ՇՄԱԳ-ում և Աշխատանքային նախագծում նշված նախագծային լուծումները՝ բացակայում են: Դեռևս կատարված չեն նախատեսվող պոչամբարի հատակի մանրագնին ուսումնասիրությունները, սակայն Բնապահպանական գերատեսչությունը նախօրոք բացառում է ստորերկրյա ջրեր՝ որևէ վնասակար նյութի ներթափանցումը:

Հարցադրում 3

ՀՀ բնապահպանության նախարարությունն առանց փորձագիտական ուսումնասիրություն կատարելու Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի նախագծին տվել է դրական եզրակացություն:

Նախարարությունը չի կատարել ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր պարտականությունները, ներառյալ՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին՝ ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պահանջները (մասնավորապես՝ վերլուծել նախատեսվող գործունեության և դրա այլընտրանքային սահմանափակումները, գնահատել շրջակա միջավայրի վրա ազդեցությունն ու վտանգավորության աստիճանը, ստուգել հետևանքների վերլուծման ամբողջականությունը և ստույգությունը, հետևանքների կանխարգելման, վերացման կամ նվազեցման համար նախատեսված միջոցառումների բավարարությունն ինչպես շահագործման և իրականացման գործընթացում, այնպես էլ արտակարգ իրավիճակների ժամանակ): ՀՀ բնապահպանության նախարարությունն իր 03.04.2006թ. թիվ ԲՓ-31 և 07.11.2006թ. թիվ ԲՓ-135 փորձաքննական եզրակացության փաստաթղթերում պարզապես համառոտագրել (կոնսպեկտավորել) է նախագիծը: Նման գործելակերպի արդյունքում խախտվել են նշված օրենքի 2-րդ հոդվածով ամրագրված սկզբունքները, մասնավորապես՝ փորձաքննական եզրակացության գիտական հիմնավորվածությունն ու օրինականությունը: Այս եզրակացությունն էլ հիմք է հանդիսացել Թեղուտի շահագործման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումների ընդունմանը:

Պատասխան

Մինչև առաջին փուլի աշխատանքների իրականացումը՝ ԱՄՔՎ-ն Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին՝ ՀՀ օրենքով սահմանված կարգով 08.01.2006թ-ին փորձաքննության է ներկայացրել Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի և լեռնահարստացուցիչ ֆաբրիկայի շահագործման ամբողջ ծրագրի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը՝ և ստացել համապատասխան եզրակացություն (03.04.06թ. ԲՓ-31): Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման միջոցով վերլուծվել է նախատեսվող գործունեությունը և դրա այլընտրանքային տարբերակները, գնահատվել է շրջակա միջավայրի վրա ազդեցությունը, հետևանքների կանխարգելման, վերացման կամ նվազեցման համար նախատեսվող միջոցառումները, հատկապես արտակարգ իրավիճակների ժամանակ և այլն:

Բնապահպանական փորձաքննություն՝ ՊՈԱԿ-ի կողմից (29.09.2006թ. ԱՍ-33/260 գրություն) պահանջվել է՝ «...նախատեսել շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված միջոցառումներ՝ շինարարության և շահագործման փուլերում, ինչպես նաև արտակարգ և վթարային իրավիճակներում, ներկայացնել դրանց հիմնավորումը, բավարարությունը, արդյունավետությունը: Լրամշակման գրություններում ներկայացվել են բազմաթիվ այլ դիտողություններ և առաջարկություններ, որոնցով նախագիծը մի քանի անգամ լրամշակվել և փորձաքննվել է: Բոլոր լրացուցիչ նյութերը պահպանվում են, և դրանց վերաբերյալ վերլուծությունները ծավալային առումով հնարավոր չէր ներառել եզրակացությունում, մինչդեռ ՇՄԱԳ-ի բոլոր լրամշակումներով ներկայացված

ուղղումները, այդ թվում նախատեսված բնապահպանական միջոցառումները ներառված են:

Մասնավորապես, ջրային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցության մանրամասն գնահատումը, համապատասխան միջոցառումները, աղտոտվածության մակարդակները ներկայացված են նախագծում (ՇՄԱԳ էջ 122-128, նախագծի շրջակա միջավայրի պահպանություն, էջ 31-38): Ըստ նախագծի տարածաշրջանի խմելու ջրի հիմնական պաշարները՝ Շնող գետի ջրերը, հանքարդյունահանումից որևէ ազդեցություն չեն կրի, քանի որ նախագծով նախատեսված են բոլոր բնապահպանական միջոցառումները՝ ջրերը ազդեցությունից զերծ պահելու նպատակով: Ջրային ավազանի աղտոտումը բացառելու համար, թե բացահանքի ջրերի, և թե ֆաբրիկայի արտադրական ջրերի համար նախագծում նախատեսված են փակ շրջանառու համակարգեր, ինչպես նաև անհրաժեշտ հզորության մաքրման կայաններ: Համաձայն նախագծի պոչամբարի համար նախատեսված է երկու պատնեշ, որոնց միջև ընկած տարածքում կհավաքվեն ներծծվող ջրերը: Ծավալը ամբողջությամբ մեկուսացված է լինելու կավի շերտով, ինչը կբացառի պոչամբարից ներծծվող ջրերի արտահոսքը շրջակա միջավայր, իսկ կուտակված ջրերը կվերադառնան շրջանառու համակարգ: Ըստ նախագծում ներկայացված հաշվարկների և նախատեսված միջոցառումների, տարածաշրջանի ջրային հավասարակշռության խախտում, ստորգետնյա ջրերի աղտոտում, գետերի աղտոտում չի ենթադրվում:

Հարստացուցիչ ֆաբրիկայի պոչերի տեղադրման տարածքի ընտրությունը կատարված է մի քանի տարբերակների համեմատության արդյունքում: Պոչամբարը ընտրվել է այն տարածքում, որ պոչերի տեղափոխումը իրականացվի ինքնահոս, ինչը ճնշումային տարբերակի համեմատությամբ կնվազեցնի վթարների հավանականությունը:

Պահպանիչ հողային պատնեշը կառուցվելու է պոչամբարից ներքև, որը ստեղծելու է վթարային ծավալի տեղավորման ավազան: Պատնեշը և ստեղծված մակերեսը լրիվ մեկուսացվում է կավի շերտով, թույլ չտալով որ պոչամբարից ներծծված ջրերը աղտոտեն իրենից ներքև գտնվող ջրերը և հողատարածքը: Ստեղծված ծավալը ելնում է այն պայմանից, որ պոչամբարի չնախատեսված վթարի դեպքում տեղավորի նրանից արտահոսող պոչերի քանակը: Միաժամանակ վթարային ավազանը կդառնա պոչամբարից դուրս եկող ջրերի երկրորդային պարզարան և երկրորդային ջրընդունիչ, որը որպես հետադարձ ջրամատակարարման համակարգ՝ պարզեցված ջրերը կուղղի հարստացման ֆաբրիկա: Այսինքն բոլոր ջրերը պարզեցումից հետո կուղղվեն ֆաբրիկա, բացառելով որևէ արտահոսք շրջակա միջավայր:

Ըստ նախագծային հաշվարկների, հիմնավորումների և նախատեսված միջոցառումների պոչամբարից ստորգետնյա ջրերի և գետերի ջրերի որևէ աղտոտում չի ենթադրվում:

Միաժամանակ փորձաքննական եզրակացությունում պարտադիր պահանջ է դրվել պոչամբարի ռեկուլտիվացիայի և կոնսերվացման նախագծային փաստաթղթերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

Նախագծում ներկայացվել են պոչամբարի ու ֆաբրիկայի կառուցման ու շահագործման այլընտրանքային տարբերակները, ինչպես նաև ընտրված տարբերակների հիմնավորումը: Լրացուցիչ ներկայացվել է նաև հանքավայրի բաց

եղանակով և ստորգետնյա եղանակով շահագործման տարբերակների համեմատական բնութագիրը, ընտրված տարբերակի հիմնավորումը:

Էրոզիոն և սողանքային երևույթների կանխմանն ուղղված միջոցառումները ևս ներկայացված են նախագծում (ՇՄԱԳ էջ 104-107, նախագծի շրջակա միջավայրի պահպանություն, էջ 39):

Վթարային և արտակարգ իրավիճակների կանխարգելման համար նախագծում նախատեսված են համապատասխան միջոցառումներ (ՇՄԱԳ էջ 133-134, նախագծի շրջակա միջավայրի պահպանություն, էջ 67-69 էջ):

Հաշվեկշռային պաշարների առկա տարրերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է նախագծում (ՇՄԱԳ էջ 94, նախագծի շրջակա միջավայրի պահպանություն, էջ 24):

Հաշվի առնելով քննարկումների տարբեր փուլերում բնապահպանական հասարակական կազմակերպությունների կողմից հնչեցված մտահոգությունները, աշխատանքային նախագիծը խորությամբ ուսումնասիրվել է նաև ՀՀ առողջապահության, ՀՀ գյուղատնտեսության և ՀՀ մշակույթի նախարարությունների կողմից: Կատարված համալիր վերլուծությունների արդյունքում հաստատվել է շրջակա միջավայրի (այդ թվում՝ մարդկանց առողջության) վրա նախատեսվող գործունեության ազդեցության սահմանափակումը գործող թույլատրելի չափերով: Ինչպես այդ քննարկումների շրջանակներում, այնպես էլ օրենքով նախատեսված տարբեր փորձաքննությունների (այդ թվում՝ բնապահպանական) իրականացման նպատակով դիտարկվել են հանքավայրի շահագործման այլընտրանքային տարբերակների (հանքավայրի բաց և փակ շահագործում, բաց եղանակով շահագործման փուլայնություն, արտադրական հրապարակի, պոչամբարի տեղանքի ընտրություն և այլն) հնարավորություններն ու նպատակահարմարությունը:

Նախ, Թեղուտի պղնձա-մոլիբդենային հանքավայրի և լեռնահարստացուցիչ ֆաբրիկայի շահագործման ամբողջ ծրագրի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում վերնագրով փաստաթուղթ շրջանառության մեջ չի դրվել, այդպիսի փաստաթուղթ գոյություն չունի:

2005 թվականին կազմվել է Թեղուտի լեռնահարստացման կոմբինատ, Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում (ՇՄԱԳ) փաստաթուղթը, որը և բազում քննարկումների առարկա է դարձել:

ՀՀ Բնապահպանության նախարարությունը հետևողականորեն փորձում է համոզել, որ իբր Թեղուտի հանքավայրի ՇՄԱԳ-ը կազմված է ծրագրի ամբողջ ժամանակաշրջանի հաշվով, սակայն միայն մեկ փաստով կարելի է ցույց տալ, որ և ՇՄԱԳ-ը և Աշխատանքային նախագիծը կազմված են միայն առաջին փուլի՝ 8 տարվա հաշվով: Այսպես, ՇՄԱԳ-ում հողերի խախտումից հասցվելիք վնասը հաշվարկված է 257 հեկտարի, իսկ Աշխատանքային նախագծում՝ 284,4 հեկտարի հաշվով (Նախագծում նշվում է, որ ամբողջ ծրագրի ընթացքում խախտվելիք հողատարածքը կազմելու է 669,4 հեկտար):

Նաև՝ Պատասխանում նշվում է, որ ՀՀ Բնապահպանության նախարարությունը՝ Թեղուտի հանքավայրի ՇՄԱԳ-ին և Աշխատանքային նախագծին տրված փորձնական եզրակացություններում (03.04.2006թ. թիվ ԲՓ-31 և 07.11.2006թ. թիվ ԲՓ-135) իբր վերլուծվել է նախատեսվող գործունեությունը, գնահատվել է շրջակա միջավայրի վրա ազդեցությունը և այլն, սակայն, իրականում համառոտագրել (կոնսպեկտավորել) է ՇՄԱԳ-ը և Աշխատանքային նախագիծը:

Նշված փորձաքննություններն իրականացնելիս, ոչ միայն չի ուսումնասիրվել ու վերհանվել նախագծի իրականացման դեպքում տնտեսությանը հասցվելիք իրական վնասի գնահատում և շրջակա միջավայրին սպառնացող իրական վտանգներն, այլև չեն նկատվել անգամ պարզ երևացող սխալները, սակայն, միշտ՝ հոգուտ Արմենիան Քափըր Փրոգրամ՝ ընկերության:

Այսպես՝

ա. ՇՄԱԳ-ի 'Հաշվեկշռային պաշարների բնութագիրը' աղյուսակում բերված են տարբեր մակարդակներով ուսումնասիրված հանքաքարերի երեք զանգվածներ (էջ 23): Առաջին զանգվածի 5,448 մլն տոննա հանքաքարում պղնձի պարունակությունը 0,376%, մոլիբդենը՝ 0,0215% է, իսկ ոսկու պարունակությունը յուրաքանչյուր մեկ ուղղումները, այդ թվում նախատեսված բնապահպանական միջոցառումները ներառված են:

Մասնավորապես, ջրային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցության մանրամասն գնահատումը, համապատասխան միջոցառումները, աղտոտվածության մակարդակները ներկայացված են նախագծում (ՇՄԱԳ էջ 122-128, նախագծի շրջակա միջավայրի պահպանություն, էջ 31-38): Ըստ նախագծի տարածաշրջանի խմելու ջրի հիմնական պաշարները՝ Շնող գետի ջրերը, հանքարդյունահանումից որևէ ազդեցություն չեն կրի, քանի որ նախագծով նախատեսված են բոլոր բնապահպանական միջոցառումները՝ ջրերը ազդեցությունից զերծ պահելու նպատակով: Ջրային ավազանի աղտոտումը բացառելու համար, թե բացահանքի ջրերի, և թե ֆաբրիկայի արտադրական ջրերի համար նախագծում նախատեսված են փակ շրջանառու համակարգեր, ինչպես նաև անհրաժեշտ հզորության մաքրման կայաններ: Համաձայն նախագծի պոչամբարի համար նախատեսված է երկու պատնեշ, որոնց միջև ընկած տարածքում կհավաքվեն ներծծվող ջրերը: Ծավալը ամբողջությամբ մեկուսացված է լինելու կավի շերտով, ինչը կբացառի պոչամբարից ներծծվող ջրերի արտահոսքը շրջակա միջավայր, իսկ կուտակված ջրերը կվերադառնան շրջանառու համակարգ: Ըստ նախագծում ներկայացված հաշվարկների և նախատեսված միջոցառումների, տարածաշրջանի ջրային հավասարակշռության խախտում, ստորգետնյա ջրերի աղտոտում, գետերի աղտոտում չի ենթադրվում:

Հարստացուցիչ ֆաբրիկայի պոչերի տեղադրման տարածքի ընտրությունը կատարված է մի քանի տարբերակների համեմատության արդյունքում: Պոչամբարը ընտրվել է այն տարածքում, որ պոչերի տեղափոխումը իրականացվի ինքնահոս, ինչը ճնշումային տարբերակի համեմատությամբ կնվազեցնի վթարների հավանականությունը:

Պահպանիչ հողային պատնեշը կառուցվելու է պոչամբարից ներքև, որը ստեղծելու է վթարային ծավալի տեղավորման ավազան: Պատնեշը և ստեղծված մակերեսը լրիվ մեկուսացվում է կավի շերտով, թույլ չտալով որ պոչամբարից ներծծված ջրերը աղտոտեն իրենից ներքև գտնվող ջրերը և հողատարածքը: Ստեղծված ծավալը ելնում է այն պայմանից, որ պոչամբարի չնախատեսված վթարի դեպքում տեղավորի նրանից արտահոսող պոչերի քանակը: Միաժամանակ վթարային ավազանը կդառնա պոչամբարից դուրս եկող ջրերի երկրորդային պարզարան և երկրորդային ջրընդունիչ, որը որպես հետադարձ ջրամատակարարման համակարգ՝ պարզեցված ջրերը կուղղի հարստացման ֆաբրիկա: Այսինքն բոլոր ջրերը պարզեցումից հետո կուղղվեն ֆաբրիկա, բացառելով որևէ արտահոսք շրջակա միջավայր:

Ըստ նախագծային հաշվարկների, հիմնավորումների և նախատեսված միջոցառումների պոչամբարից ստորգետնյա ջրերի և գետերի ջրերի որևէ աղտոտում չի ենթադրվում:

Միաժամանակ փորձաքննական եզրակացությունում պարտադիր պահանջ է դրվել պոչամբարի ռեկուլտիվացիայի և կոնսերվացման նախագծային փաստաթղթերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

Նախագծում ներկայացվել են պոչամբարի ու ֆաբրիկայի կառուցման ու շահագործման այլընտրանքային տարբերակները, ինչպես նաև ընտրված տարբերակների հիմնավորումը: Լրացուցիչ ներկայացվել է նաև հանքավայրի բաց եղանակով և ստորգետնյա եղանակով շահագործման տարբերակների համեմատական բնութագիրը, ընտրված տարբերակի հիմնավորումը:

Էրոզիոն և սողանքային երևույթների կանխմանն ուղղված միջոցառումները ևս ներկայացված են նախագծում (ՇՄԱԳ էջ 104-107, նախագծի շրջակա միջավայրի պահպանություն, էջ 39):

Վթարային և արտակարգ իրավիճակների կանխարգելման համար նախագծում նախատեսված են համապատասխան միջոցառումներ (ՇՄԱԳ էջ 133-134, նախագծի շրջակա միջավայրի պահպանություն, էջ 67-69 էջ):

Հաշվեկշռային պաշարների առկա տարրերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է նախագծում (ՇՄԱԳ էջ 94, նախագծի շրջակա միջավայրի պահպանություն, էջ 24):

Հաշվի առնելով քննարկումների տարբեր փուլերում բնապահպանական հասարակական կազմակերպությունների կողմից հնչեցված մտահոգությունները, աշխատանքային նախագիծը խորությամբ ուսումնասիրվել է նաև ՀՀ առողջապահության, ՀՀ գյուղատնտեսության և ՀՀ մշակույթի նախարարությունների կողմից: Կատարված համալիր վերլուծությունների արդյունքում հաստատվել է շրջակա միջավայրի (այդ թվում՝ մարդկանց առողջության) վրա նախատեսվող գործունեության ազդեցության սահմանափակումը գործող թույլատրելի չափերով: Ինչպես այդ քննարկումների շրջանակներում, այնպես էլ օրենքով նախատեսված տարբեր փորձաքննությունների (այդ թվում՝ բնապահպանական) իրականացման նպատակով դիտարկվել են հանքավայրի շահագործման այլընտրանքային տարբերակների (հանքավայրի բաց և փակ շահագործում, բաց եղանակով շահագործման փուլայնություն, արտադրական հրապարակի, պոչամբարի տեղանքի ընտրություն և այլն) հնարավորություններն ու նպատակահարմարությունը:

Նախ, Թեղուտի պղնձա-մոլիբդենային հանքավայրի և լեռնահարստացուցիչ ֆաբրիկայի շահագործման ամբողջ ծրագրի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում՝ վերնագրով փաստաթուղթ շրջանառության մեջ չի դրվել, այդպիսի փաստաթուղթ գոյություն չունի:

2005 թվականին կազմվել է Թեղուտի լեռնահարստացման կոմբինատ, Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում (ՇՄԱԳ) փաստաթուղթը, որը և բազում քննարկումների առարկա է դարձել:

ՀՀ Բնապահպանության նախարարությունը հետևողականորեն փորձում է համոզել, որ իբր Թեղուտի հանքավայրի ՇՄԱԳ-ը կազմված է ծրագրի ամբողջ ժամանակաշրջանի հաշվով, սակայն միայն մեկ փաստով կարելի է ցույց տալ, որ և ՇՄԱԳ-ը և Աշխատանքային նախագիծը կազմված են միայն առաջին փուլի՝ 8

տարվա հաշվով: Այսպես, ՇՄԱԳ-ում հողերի խախտումից հասցվելիք վնասը հաշվարկված է 257 հեկտարի, իսկ Աշխատանքային նախագծում՝ 284,4 հեկտարի հաշվով (Նախագծում նշվում է, որ ամբողջ ծրագրի ընթացքում խախտվելիք հողատարածքը կազմելու է 669,4 հեկտար):

Նաև՝ Պատասխանում նշվում է, որ ՀՀ բնապահպանության նախարարությունը՝ Թեղուտի հանքավայրի ՇՄԱԳ-ին և Աշխատանքային նախագծին տրված փորձնական եզրակացություններում (03.04.2006թ. թիվ ԲՓ-31 և 07.11.2006թ. թիվ ԲՓ-135) իբր վերլուծվել է նախատեսվող գործունեությունը, գնահատվել է շրջակա միջավայրի վրա ազդեցությունը և այլն, սակայն, իրականում համառոտագրել (կոնսպեկտավորել) է ՇՄԱԳ-ը և Աշխատանքային նախագիծը:

Նշված փորձաքննություններն իրականացնելիս, ոչ միայն չի ուսումնասիրվել ու վերհանվել նախագծի իրականացման դեպքում տնտեսությանը հասցվելիք իրական վնասի գնահատում և շրջակա միջավայրին սպառնացող իրական վտանգներն, այլև չեն նկատվել անգամ պարզ երևացող սխալները, սակայն, միշտ՝ հոգուտ Արմենիան Քափըր Փրոգրամ՝ ընկերության:

Այսպես՝

ա. ՇՄԱԳ-ի Հաշվեկշռային պաշարների բնութագիրը՝ աղյուսակում բերված են տարբեր մակարդակներով ուսումնասիրված հանքաքարերի երեք զանգվածներ (էջ 23): Առաջին զանգվածի 5,448 մլն տոննա հանքաքարում պղնձի պարունակությունը 0,376%, մոլիբդենը՝ 0,0215% է, իսկ ոսկու պարունակությունը յուրաքանչյուր մեկ շահագործման համապետական կարևոր նշանակությունը, իսկ վերջինս էլ, փաստորեն, հիմնավորվել է թերհաշվարկներով ու կեղծիքներով կազմված փաստաթղթով, որում ծայրաստիճան նվազեցված են երկրի տնտեսությանը հասցվող իրական վնասները:

Պատասխան

Թեղուտի հանքավայրի շահագործման ծրագիրը բացառիկ, գերակա հանրային շահ համարելու հիմնավորումները, Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին՝ ՀՀ օրենքի համաձայն, ներկայացված են ՀՀ կառավարության 2007թ նոյեմբերի 1-ի թիվ1279-Ն որոշման 1-ին կետով: Ինչ վերաբերում ծրագրի ազդեցությանը, դրա արդյունքում հասցվող վնասի թերհաշվարկներին, ապա դրանց վերաբերյալ պարզաբանումները ներկայացվել են վերևում: Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից կատարված համակողմանի ուսումնասիրությունների արդյունքում ծրագրի իրականացումը նպատակահարմար է համարվել հենց բնական պաշարների արդյունավետ օգտագործման, կայուն զբաղվածության ստեղծման, ընդերքօգտագործման՝ շրջակա միջավայրի վրա նվազագույն ազդեցություն ունեցող եղանակների կենսագործման ու շրջակա միջավայրի վրա ծրագրի բացասական ազդեցության փոխհատուցմանն ուղղված միջոցառումների հիմնավորվածության տեսանկյունից:

Փաստորեն, հարցի պատասխանը բացակայում է: Մասնագիտական պատասխանի փոխարեն վերապատմվում է ՀՀ կառավարության հայտնի որոշումը, իսկ այն, որ իբր վնասի թերհաշվարկների վերաբերյալ պարզաբանումները ներկայացվել են վերևում, դա իրոք կարելի է համարել ճարպկության և պատասխանատվության բացակայության դրսևորում: Ինչպես վերևում համոզվեցինք, թերհաշվարկները կոծկելու-քողարկելու համար, ՀՀ բնապահպանության նախարարությունը կեղծել-

նենգափոխել է տվյալները, իսկ այժմ էլ համարձակորեն հղում է կատարում այդ կեղծիքների վրա:

Այն բացատրություններն, որ ՀՀ կառավարության կողմից կատարված համակողմանի ուսումնասիրությունների արդյունքում ծրագրի իրականացումը նպատակահարմար է համարվել հենց բնական պաշարների արդյունավետ օգտագործման, կայուն զբաղվածության ստեղծման տեսանկյունից, բացարձակորեն հիմնավորված չեն: Նախ, Թեղուտի հանքավայրի ծրագիրը բացառիկ՝ գերակա հանրային շահ համարելու հիմնավորումները՝ առաջին հերթին բնապահպանության նախարարության կողմից հանքավայրի նախագծին տված դրական եզրակացությունն է, և ապա, այդ նույն նախարարությունը չէ՞, որ բնական պաշարների արդյունավետ օգտագործման և պետական կարևորագույն նշանակություն ունեցող նախագիծ է համարում այնպիսի մի նախագիծ, որի մեջ մետաղների կորզումը լիարժեք չէ, հարակից արժեքավոր նյութերը հիմնականում չեն կորզվելու, մետաղների խտանյութերն արտահանվելու են ևն: Նախարարությունը ընկերության համար շահեկան փաստաթղթեր է հորինում և հայտարարում, թե դրանք համակողմանի ուսումնասիրությունների արդյունք են: Նաև՝ այդ ի՞նչ կայուն զբաղվածության մասին է խոսվում, երբ արդյունքում կորսվելու են բազում կայուն աշխատատեղեր, հասկանալի է, 25-28 տարիների ընթացքում ստեղծվելու են ժամանակավոր աշխատատեղեր:

Հարցադրում 5.

Թեղուտի հանքավայրի շահագործման հիմնական օգուտների շարքում մատնանշվում են մոտ 1400 աշխատատեղերի ստեղծումը և տարեկան 6-7 միլիոն դոլարի հասնող մուտքերը պետական բյուջե: Իրականում ստեղծվելիք աշխատատեղերը ժամանակավոր են (25 տարով), իսկ հանքավայրի շահագործման արդյունքում շրջակա միջավայրին հասցվող վնասները աստիճանաբար կվերացնեն գոյություն ունեցող և մի քանի անգամ գերազանցող գյուղատեսական կայուն աշխատատեղերը: Ստանալով աղտոտված հողեր ու ջրեր, ենթարկվելով կլիմայի անբարենպաստ փոփոխություններին և զրկվելով անտառի բարիքներից օգտվելու հնարավորությունից, Շնող և Թեղուտ գյուղի բնակիչները որոշ ժամանակ անց ստիպված կլինեն լքել այս տարածքը և գյուղերը կամայանան:

Պատասխան

Մույն կետը չի վերաբերում նախարարության գործառույթներին:

ՀՀ բնապահպանության նախարարությունը, հավանաբար չի իմանում իր գործառույթների վերին ու ներքին սահմանները կամ Հարցադրումը հապճեպ է ընթերցվել: Հիշեցնենք, որ ծրագրերի բնապահպանական փորձաքննությունը, որը ներառում է վերը թվարկածի բոլոր բաղադրիչները, օրենքով սահմանված կարգով իրականացնում է ՀՀ բնապահպանության նախարարությունը:

Հարցադրում 6.

Թեղուտի շահագործմանն առնչվող ՀՀ կառավարության որոշումների արդյունքում խախտվել են ՀՀ մի շարք օրենքներ և միջազգային կոնվենցիաներ, այդ թվում՝ ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի Անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին՝ կոնվենցիան, որի

համաձայն ազդեցության աղբյուր հանդիսացող երկիրը պետք է իրազեկեր հարևան՝ հնարավոր ազդեցության ենթակա երկրների հասարակայնությանը նախատեսվող գործունեության և դրա հնարավոր ազդեցության մասին և, վերջիններիս կողմից դրսևորած շահագրգռվածության դեպքում, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվեր համատեղ: Վերը նշված պարտավորությունների խախտումը Հայաստանի կողմից կարող է հանգեցնել մեծ տուգանքների:

Պատասխան

Թեղուտի հանքավայրի շահագործման ընթացքում բացառվում են անդրսահմանային ազդեցությունները: Հետևաբար, հիշատակված կոնվենցիայի դրույթները պարզապես կիրառելի չեն այս ծրագրի նկատմամբ:

Պատասխանի փոխարեն՝ հերթական հայտարարություն, այն էլ ծայր աստիճան անհիմն, հակազիտական:

Օրինակ, ըստ Աշխատանքային նախագծի պոչամբարը տեղադրվելու է Խառատաձոր գետի հունում-կիրճում, զբաղեցնելու է 214 հեկտար տարածություն, բարձր թեքությունների վրա հարյուրավոր միլիոն տոննա պոչանքի առկայության պայմաններում ինչպես է հնարավոր բացարձակորեն, 100%-անոց անվտանգության երաշխիքով պոչանքը մեկուսացնել բնական միջավայրից... Մակաբացման ապարներ մի մասը լցվելու է Դուքանաձոր գետի հունը-կիրճը, դրանք լցվելու են հանքավայրի նաև մոտակա երկու այլ վայրերում: Այստեղ նույնպես աղտոտված ջրերի արտահոսքի բացառումը ուղղակի լուրջ չէ: Բացահանքի հետևանքով առաջանալիք խոռոչը ունենալու է 240 հեկտար մակերես: Խոռոչը լցվելուց հետո, գլխավորապես հանքի շահագործումից հետո, երբ այդ ջրերը այլևս չեն օգտագործվի, հետաքրքիր է հարցնել՝ ո՞ր են հոսելու այդ ջրերը, եթե ոչ Դեբեդ գետը:

Հարցադրում 7.

ՀՀ օրենսդրությամբ չեն կարգավորվում հանքարդյունաբերության թափոնների՝ մակաբացման շերտի ապարների և պոչանքների հետ կապված հարաբերությունները (Թափոնների մասին՝ ՀՀ օրենքի 2-րդ հոդված), ինչի արդյունքում, փաստորեն, արտոնություն է տրվում հանքարդյունաբերողին չվճարել հանքարդյունաբերական թափոնները շրջակա միջավայրում տեղադրելու համար: Եթե դրանց դիմաց վճարվեր Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին՝ ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նույնիսկ ամենացածր սակագներով, տարեկան 7 միլիոն տոննա հանքաքար վերամշակելու դեպքում ACP ընկերությունը առաջանալիք հանքարդյունաբերական թափոնների համար ՀՀ պետական բյուջե պետք է մուծեր ավելի քան 56 միլիոն դոլար: Փաստորեն, պետությունն ընկերությանը արտոնում է չմուծել այս գումարը, փոխարենը ակնկալելով 6-7 միլիոն դոլար հարկային եկամուտներ պետական բյուջե:

Պատասխան

Չնայած, որ պոչամբարների հիմնախնդիրը արդիական է Հայաստանի Հանրապետության համար, սակայն դրանց հետ կապված հարցերը չեն կարգավորվում Թափոնների մասին՝ ՀՀ օրենքով և Ընդերքի մասին՝ ՀՀ օրենսգրքով: Թափոնների մասին՝ ՀՀ օրենքի գործողությունը չի տարածվում նաև

հանքաարդյունահանող կազմակերպությունների մակաբացման շերտի ապարների վրա: Միջազգային պրակտիկայի ուսումնասիրումը ցույց է տվել, որ պոչամբարների հարցը կարգավորված չէ նաև այլ երկրներում: Պոչամբարները տեխնաժին հանքակուտակներ են և դրանց համար անհրաժեշտ է մշակել հատուկ օրենսդրություն՝ հաշվի առնելով երկրաբանական առանձնահատկությունները և այն, որ դրանք պարունակում են վտանգավոր քիմիական նյութեր:

Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին՝ ՀՀ օրենքով հստակ կանոնակարգված է հանքարդյունաբերության թափոնների (այդ թվում նաև՝ պոչանքների) տեղադրման հետ կապված վճարների վճարումը: Շրջակա միջավայրի համար անվտանգ եղանակով հանքարդյունաբերության թափոնների տեղակայումը (այնպես, ինչպես նախատեսված է Թեղուտում) չի հանգեցնում բնապահպանական վճարների վճարման, մինչդեռ շրջակա միջավայր պոչամբարներից արտանետումների կամ արտահոսքերի առկայության պարագայում բնապահպանական վճարները գանձվում են նույն կերպ, ինչպես և այլ՝ շրջակա միջավայրի համար ցանկացած վնասակար ազդեցության պարագայում:

Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին՝ ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն լեռնարդյունահանող իրավաբանական անձանց կողմից ոչ վտանգավոր թափոնների տեղադրման համար սահմանված բնապահպանական վճարի գրոյական դրույքաչափը պայմանավորված է ոչ թե այն հանգամանքով, որ Թափոնների մասին՝ ՀՀ օրենքը չի կարգավորում հանքարդյունաբերության թափոնների հետ կապված հարցերը, այլ դրանով, որ գրոյական դրույքաչափը սահմանված է հաշվի առնելով միջազգային փորձը և որ խոսքը գնում է ոչ վտանգավոր թափոնների մասին:

Իրականությանը չի համապատասխանում այն, որ իբր Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին՝ ՀՀ օրենքով հստակ կանոնակարգված է հանքարդյունաբերության թափոնների (այդ թվում նաև՝ պոչանքների) տեղադրման հետ կապված վճարների վճարումը: Այդ օրենքում մակաբացման ապարների համար վճարը գրոյացված է, իսկ պոչանքների մասին խոսք չկա: Կարծում ենք, հստակ կանոնակարգված է՝ արտահայրտությունը հավանաբար վերաբերում է նշված գրոյացմանը: Բնապահպանության նախարարությունը իր Պատասխանում նաև շփոթ է առաջացնում բնապահպանական վճարների և տուգանքների խնդիրներում:

7 միլիոն տոննա հանքաքար վերամշակելու դեպքում առաջանալիք թափոնների համար 56 միլիոն դոլար բնավճարը, անհասկանալի է թե ինչու, ՀՀ բնապահպանության նախարարությունը համարում է զուտ տեսական և չիմնավորված, իսկ վնասի նկարագիրը՝ ենթադրական բնույթի:

Փորձենք ներկայացնել մեր տեսակետը. ըստ Աշխատանքային նախագծի հանքավայրի մակաբացման գործակիցը 0,664 մ³ է, եթե մակաբացման ապարների միջին ծավալային կշիռը ընդունենք 2,4 (2,42), ապա այդ դեպքում յուրաքանչյուր տոննա հանքաքար հանելիս կառաջանա մոտ 1,6 տոննա մակաբացման ապար, 7 մլն տոննայի հաշվով՝ 11,2 մլն տոննա: Մակաբացման ապարները համարվում են ոչ վտանգավոր թափոններ (հատուկ հատկացրած տեղերում մեկ տոննայի տեղադրման համար վճարը կազմում է 600 դրամ), հետևաբար 11,2մլն տոննաX600դրամ=6,72 մլրդ դրամ: 7 մլն տոննա հանքաքարի վերամշակումից կառաջանա 6,91 մլն տոննա պոչանք (պոչանքը կազմում է հանքանյութի 98,75%-ը): Պոչանքը, ըստ Աշխատանքային նախագծի համարվում է չորրորդ դասի թափոն՝ 1 տոննայի բնապահպանական վճարը՝ 1500 դրամ: 6,91 մլն տոննայի հաշվով

բնապահպանական վճարը կկազմի 10,36 մլրդ դրամ: Այսպիսով, 7 մլն տոննա հանքաքարի հանման ու վերամշակման ընթացքում առաջացած թափոնների համար պահանջվող բնապահպանական վճարը կկազմի 17 մլրդ դրամ (56 մլն դոլար):

ՀՀ բնապահպանության նախարարության այն բացատրությունը, որ գրոյական դրույքաչափը սահմանված է հաշվի առնելով միջազգային փորձը և որ խոսքը գնում է ոչ վտանգավոր թափոնների մասին, անհիմն է: Միջազգային փորձը պետք է ունենա գիտական հիմնավորվածություն, տրամաբանություն: Իսկ այն, ինչ այսօր կատարվում է հանքարդյունաբերության ոլորտում դա ուղղակի ազգային ունեցվածքների կողոպուտ է: Հարուստ երկրները և ազդեցիկ ընկերությունները թույլ օրենքներ և թույլ պետական կառավարման համակարգ ունեցող երկրներներում, առանց որևէ հիմնավորման, ազատվելով գլխավոր հարկերից և անգամ չվճարելով ծրագրերի իրականացման հետևանքով հասցվելիք վնասը, կորզում-տանում են ընդերքի հարստությունները, սակայն այդ երկրներում թողնելով ամենավտանգավոր և հարյուր հազարավոր տարիներ շարունակաբար կենդանի աշխարհին մեծ վտանգ սպառնացող թափոնները, գլխավորապես՝ հանքարդյունաբերական պոչանքները:

Նաև՝ ոչ վտանգավոր թափոնների համար սահմանված է դրույքաչափ, իսկ մակաբացման ապարները կարող են լինել անգամ առաջին կան երկրորդ դասի վտանգավորության թափոններ, իհարկե, կախված նրանց մեջ պարունակվող վտանգավոր նյութերի խտություններից: Բերենք քաղվածք Աշխատանքային նախագծից. 'Հետագայում այս հողը կօգտագործվի պոչամբարի և լցակույտի տարածքի մակերեսը մինչև 30-50սմ հզորությամբ հողաշերտով ծածկելու համար: Մա կկանխարգելի ծանր մետաղներով հարուստ հանքանյութի հողմնահարումը և քամու միջոցով շրջակա տարածքներ տարածելը' (հատոր 7, էջ 41):

Հարցադրում 8

Հայաստանը հարուստ է ընդերքի հանածոներով, սակայն լիարժեք կերպով գնահատված ու հաշվառված չեն այդ պաշարները, չկա համապատասխան ռազմավարություն և երկարաժամկետ ծրագիր, որը նպատակաուղղված լիներ հանքանյութի բանական օգտագործմանը, բացահայտել սոցիալ-տնտեսական զարգացումը խթանելու հնարավորությունները և հաշվի առնել ինչպես այսօրվա, այնպես էլ՝ ապագա սերունդների շահերը: Բացարձակապես հիմնավորված չեն խտանյութերի արտահանմանը միտված ներկայիս գործընթացներն՝ այն դեպքում, երբ կարելի էր տնտեսությունն իրապես զարգացնել՝ կառուցելով մետաղների ձուլման գործարաններ, մաքուր մետաղներին զուգահեռ ստանալով թանկարժեք ու հազվագյուտ մետաղներ, ստեղծելով գիտական ներուժի զարգացման հիմքեր, կազմակերպելով երկրի ներսում վերջնական ապրանքի թողարկման արտադրություններ և բացելով անհամեմատ ավելի շատ աշխատատեղեր: Այսօր երկրում արդեն իսկ շահագործվում է 372 հանքավայր, բնապահպանական փորձաքննության են ներկայացվել ևս 12 նախագիծ, իսկ ՀՀ կառավարության կողմից հանքարդյունաբերությունը որպես գերակա ոլորտ ճանաչելու և վերը նկարագրված օրենսդրական արտոնությունների պարագայում ակնկալվում է շահագործման տեմպերի կտրուկ աճ և ռեսուրսների անխնա ու անհեռատես օգտագործում:

Պատասխան

Արդյունաբերական նշանակություն ունեցող բոլոր հանքավայրերի պաշարները հաստատված են, դրանցից մի քանիսը այժմ գտնվում են վերագնահատման փուլում: Տվյալներին կարելի է ծանոթանալ Օգտակար հանածոների պաշարների գործակալությունից: Բացի այդ, Հայաստանի Հանրապետությունը ունի արդյունաբերության զարգացման հնգամյա ծրագիր, որտեղ հանքարդյունաբերության զարգացումը գտնվում է առաջին տեղում: Այսօր Հայաստանում շահագործվում է 12 մետաղական հանքավայր: ՀՀ կառավարությունն այս առումով իր խնդիրն համարում է բոլոր սուբյեկտների համար տնտեսավարման առավելագույն նպաստավոր պայմանների ստեղծումը, ինչն ինքնին երաշխիք կհանդիսանա երկրի համար մրցունակ ճյուղերի կայացման ու զարգացման: Համարում ենք, որ դրան ուղղված ջանքերի արդյունք է նաև այն, որ հանքարդյունաբերության արտադրանքն ՀՀ-ից արտահանվում է հիմնականում վերամշակված տեսքով, սակայն և համաձայն ենք, որ վերամշակման հետագա խորացումից երկիրը կարող է միայն շահել:

Այժմ Հայաստանի Հանրապետությունից հանքարդյունաբերության արտադրանքն արտահանվում է հիմնականում խտանյութերի տեսքով և բնապահպանության նախարարությունը պետք է որ իր ջանքերը ուղղեր այդ վտանգավոր ու աղետաբեր երևույթի կանխման համար: ՀՀ բնապահպանության նախարարության արտահայտությունը, որ դրան ուղղված ջանքերի արդյունք է նաև այն, որ հանքարդյունաբերության արտադրանքն ՀՀ-ից արտահանվում է հիմնականում վերամշակված տեսքով, կարելի է միայն հեզմանք համարել: Արտահանել, օրինակ, մետաղների խտանյութեր կամ՝ սև՝ պղենձ, տեղում թողնելով թափոնները, որոնք հիմնականում կայուն թունավոր նյութեր են, դա նշանակում է երկրի ապագայի կործանում:

Պատասխաններից հիմնականում այն տպավորությունն է ստեղծվում, որ ՀՀ բնապահպանության նախարարությունը գործում է պետական շահերի դեմ:

Հարցադրում 9

Բացի վերոնշյալը, մտահոգություն են առաջացնում մի շարք հարցեր.

ա. Ի՞նչ հիմնավորմամբ է ՀՀ բնապահպանության նախարարությունը 2001թ.-ին Թեղուտի անտառածածկ տարածքը տրամադրել երկրաբանական հետախուզման համար՝ հետագա հանքարդյունաբերություն իրականացնելու նպատակով: Եթե կար նման ծրագիր, ապա դրա հայեցակարգը պետք է ժամանակին ներկայացվեր բնապահպանական պետական փորձաքննության Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն:

բ. Ի՞նչով է հիմնավորված ևս մեկ պայմանագրի կնքումը ACP ընկերության հետ, երբ վերջինս արդեն մեկ անգամ տապալել է ՀՀ կառավարության հետ կնքած իր պայմանագիրը, որով պարտավորվել էր մինչև 2009թ. իրականացնել գործողությունների շարք՝ որսալու և օգտահանելու իր կողմից գործարկվող՝ Ալավերդու պղնձածուլարանից մթնոլորտ արտանետվող թունավոր նյութերը:

գ. Որքանով է ընդունելի, որ Հայաստանում ընդերքօգտագործման ոլորտում շահագրգիռ անձ հանդիսացող ձեռներեցը ներգրավված լինի ՀՀ ընդերքօգտագործման խորհրդատվական հանձնաժողովի կազմում: ACP ընկերության նախագահ Վ.Մեջլումյանը ՀՀ նախագահի հրամանագրով ընդգրկված է այդ հանձնաժողովի կազմում:

Պատասխան

ա. Քանի որ Թեղուտի հանքավայրի հաշվարկային պաշարները հաստատվել են դեռևս 19.06.91թ ԽՍՀՄ ՊՊՀ-ի կողմից թիվ 11074 արձանագրությամբ, ապա համաձայն 'Ընդերքի մասին' օրենսգրքի 28-րդ հոդվածի ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարության կողմից /ներկայումս ՀՀ էկոնոմիկայի նախարարություն/ տրամադրվել է ոչ թե ուսումնասիրության, այլ շահագործման լիցենզիա /08.02.01թ թիվ ՀՎ-ՄՇ-13/33/:

17.11.05թ թիվ ԳԱ-205 գրությամբ 'ACP' ՓԲԸ-ը դիմել է Բնապահպանության նախարարություն՝ Թեղուտի հանքային դաշտում ուսումնասիրության հատուկ լիցենզիա ստանալու համար: Համաձայն 'Կոնցեսիայի մասին' ՀՀ օրենքի 10 և 13-րդ հոդվածների և Ընդերքօգտագործման խորհրդատվական հանձնաժողովի 14.12.05թ թիվ 4 փորձագիտական դրական եզրակացության, ընկերությանը տրամադրվել է ուսումնասիրության թիվ 21 հատուկ լիցենզիա:

Ըստ Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին՝ ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի երկրաբանական ուսումնասիրությունները որպես նախատեսվող գործունեություն ենթակա չեն փորձաքննության:

բ. ՀՀ կառավարությունը 'ACP' ՓԲԸ-ի հետ չունի Ալավերդու պղնձաձուլարանի գործունեությանն առնչվող որևէ պայմանագիր (այդ թվում՝ ավելի քան 10 տարի առաջ կնքված): Գործարանի համար ՀՀ բնապահպանության նախարարության կողմից հաստատված՝ անշարժ աղբյուրներից աղտոտող նյութեր մթնոլորտ արտանետելու ժամանակավոր չափաքանակների և դրանց սահմանման համար հիմք հանդիսացած բնապահպանական ծրագրի համաձայն, ընկերությունը պարտավորություն է ստանձնել մինչև 2007 թվականի դեկտեմբերի 31-ը ծծմբային գազերի արտանետումները նվազեցնել 10 տոկոսով, իսկ մինչև 2008 թվականի դեկտեմբերի 31-ը՝ 70 տոկոսով: ՀՀ կառավարության նախաձեռնությամբ կատարված օրենսդրական փոփոխություններով, վերոնշյալ ժամանակավոր չափաքանակների սահմանմամբ, 2005 թվականի երկրորդ կիսամյակից արդեն իսկ մթնոլորտային արտանետումների համար ընկերության կողմից վճարվող բնապահպանական վճարի դրույքաչափերն ավելացել են շուրջ երեք անգամ: Ընկերության ստանձնած պարտավորությունների չկատարման դեպքում 2009 թվականի հունվարի 1-ից Ալավերդու պղնձաձուլարանի կողմից մթնոլորտային արտանետումների համար վճարվող բնապահպանական վճարի չափերը կավելանան ևս շուրջ երեք անգամ: Թեև այս ֆինանսական լծակները բավարար կարող են լինել՝ ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու առումով, սակայն կառավարությունն այս հարցում չի բավարարվում պասիվ դերակատարմամբ, և ընկերության հետ քննարկումներում մշտապես բարձրացնում է ստանձնած պարտավորությունների կատարման անհրաժեշտության հարցը: ՀՀ կառավարությունը հետամուտ կլինի ընկերության ստանձնած պարտավորությունների կատարմանը՝ ապահովելով 2009 թվականի հունվարի 1-ից Ալավերդու պղնձաձուլարանի մթնոլորտային արտանետումների էական կրճատում:

գ. Վ. Մեջլումյանը ՀՀ Նախագահի հրամանագրով /14.12.2003թ թիվ ՆՀ-162-Ա/ ընգրկված է ՀՀ ընդերքօգտագործման խորհրդատվական հանձնաժողովի կազմում համաձայն 05.11.2002թ. ՀՀ ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու

(Կոնցեսիայի) մասին՝ ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի՝ 2. Ընդերքօգտագործման խորհրդատվական հանձնաժողովը բաղկացած է 9 անդամից: Հանձնաժողովի 3 անդամներ նշանակվում են պետական մարմիններից, իսկ վեցը՝ տվյալ ոլորտի հեղինակավոր գիտնականներից և մասնագետներից, Հանձնաժողովը գործում է հասարակական հիմունքներով:

ա. հարցի պատասխանը բացակայում է:

բ. Արմենիան Քափըր Փրոգրամ՝ ընկերությունը ՀՀ բնապահպանության նախարարության առջև պարտավորություն է ստանձնել, դա արդեն նշանակում է, որ ընկերությունը կառավարության հետ պայմանագիր ունի, քանի որ նախարարությունը կառավարության մաս է կազմում: Կամ, եթե որևէ պայմանագիր չկա, ապա ինչ հիմնավորվածությամբ՝ ՀՀ կառավարությունը հետամուտ կլինի ընկերության ստանձնած պարտավորությունների կատարմանը: Հիշեցնենք, որ Շրջակա միջավայրի վրա Ալավերդու պղնձաձուլական գործարանի ազդեցության նվազեցման նպատակով իրականացվող բնապահպանական միջոցառումների ժամանակացույց-ով նախատեսված ծրագիրն ամբողջովին չի իրականացվել: Եթե ընկերությունը ՀՀ կառավարության հետ որևէ պայմանագիր չունի, ապա ինչ հիմնավորմամբ է ազատվել բնապահպանական վճարները ամբողջությամբ մոծելուց: 2006թ. ընկերությանը պատկանող պղնձաձուլարանից Ալավերդու մթնոլորտ է արտանետվել 26,9 հազար տոննա ծծմբային անհիդրիդ, այն դեպքում, երբ դրա տարեկան հիգիենիկ նորման 1,18 հազար տոննա է, սակայն Բնապահպանության նախարարությունն՝ իմա՝ ՀՀ կառավարությունը ընկերությանը թույլատրել է նշված 1,18-ի փոխարեն արտանետել 15,6 հազար տոննա ծծմբային անհիդրիդ: Ալավերդի քաղաքում տիրող էկոլոգիական աղետալի վիճակին տեղյակների համար ՀՀ բնապահպանության նախարարության Պատասխանի ստորև հատված, որ Ընկերության ստանձնած պարտավորությունների չկատարման դեպքում 2009 թվականի հունվարի 1-ից Ալավերդու պղնձաձուլարանի կողմից մթնոլորտային արտանետումների համար վճարվող բնապահպանական վճարի չափերը կավելանան ևս շուրջ երեք անգամ, ուղղակի սադիստական դրսևորում է Ալավերդի քաղաքի և մոտակա բնակավայրերի բնակիչների նկատմամբ:

գ. հարցի պատասխանը բացակայում է: Փոխարենը ներկայացվում է ՀՀ նախագահի հրամանագրի բովանդակությունը:

Ամփոփելով կարելի է ասել, որ հարցերի պատասխաններում ակնհայտ է ոչ լուրջ մոտեցում: Տուրվել են շրջանցող, շփոթ առաջացնող, կեղծիք պարունակող պատասխաններ:

Միայն Թեղուտի հանքավայրի ծրագրի առումով կարելի է ասել, որ ՀՀ բնապահպանության նախարարությունը չհիմնավորված ու կեղծ տեղեկություններ է տալիս նաև իր վերադասին՝ ՀՀ կառավարությանը և պետական ունեցվածքի նկատմամբ անփույթ և անտարբեր վերաբերմունք դրսևորում: Մեր կարծիքով, այս հարցը պետք է դառնա օրենսդրորեն հատուկ լիազորված մարմինների ուսումնասիրության առարկա: Թեղուտի հանքավայրի ծրագրի վերաբերյալ ՀՀ բնապահպանության նախարարության տված փորձաքննական եզրակացությունների որակը նաև կասկածի տակ է դնում այդ գերատեսչության կողմից դրական եզրակացություն ստացած պետականորեն կարևորագույն նշանակություն ունեցող այլ ծրագրերի հիմնավորվածությունները:

htn. 281411
armgreen@ipia.sci.am